## Արդյոք գիտե՞ք:

ՄՊՎ-ն առաջացնում է 9 տեսակի քաղցկեղներ և սեռական գորտնուկներ: ՄՊՎ-ի պատվաստումը լավագույն մեթոդն է վիրուսից պաշտպանվելու համար:

Այն օգնում է բոլոր տարիքային խմբի անձանց: Պատվաստումը պաշտպանում է վիրուսի տարբեր տեսակներից, որոնք դեռ օրգանիզմ չեն ներթափանցել: Եթե ինքնալավացման եղանակով օրգանիզմը ազատվել է պապիլոմա վիրուսից, պատվաստումը կօգնի որպեսզի տեղի չունենա կրկնավարակ: Անկախ ամեն ինչից պատվաստված ես թե ոչ, պետք է հանձնել ՊԱՊ քսուկ, արգանդի վզիկի քաղցկեղը վաղ փուլերում հայտնաբերելու կապակցությամբ:

## Կարևոր քայլեր ուղղված

### ՄՊՎ-ով պայմանավորված քաղցկեղներից և սեռական գորտնուկներից պաշտպանվելու համար:

- Ես կստանամ ՄՊՎ պատվաստանյութ անկախ տարիքից, սեռից և կարգավիճակից:
- Եթե ունեմ արգանդի վզիկ, անպայման պետք է անցնեմ ՊԱՊ քսուկի թեստավորում:
- Ես պետք է խորհորդ տամ, իմ սիրելիին պատվաստվի և ժամանակին ենթարկվի սքրինինգի:

www.hpvglobalaction.org



# Ինչպես պաշտպանվել:

## 9 տեսակի քաղցկեղներից և սեռական գորտնուկներից:



## դու համոզվա՞ծ ես, որ չունես ՄՊՎ։

Կանադացիների մոտ 75%-ը կայնքի որևէ փուլում ձեռք է բերում ՄՊՎ վիրուսի առնվազն 1 տեսակ:

Մարդիկ կարող են ձեռք բերել անգամ մաշկ-մաշկ սեռական շփման միջոցով, նույնիսկ առանց ներթափանցման:

Պահպանակը շատ լավ պաշտպանում է սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններից, անցանկալի հղիությունից: Պահպանակը պաշտպանում է ՄՊՎ-ից հիմնականում, բայց չի տալիս ամբողջական պաշտպանություն, քանի որ վիրուսը կարող է փոխանցվել մաև մաշկ-մաշկ սեռական շփման միջոցով:



## Որոշ քաղցկեղներ, որոնք առաջանում են մարդու պապիլոմա վիրուսներից:




## Արդյոք գիտե՞ք:

Այս վիրուսը կարող է օրգանիզմում քնած մնալ մինչ 40 տարի և հետագայում արտահայտվի քաղցկեղի տեսքով:
Դա նշանակում է, որ այսօրվա ձեռք բերած ՄՊՎ-ն ախտահարելու է քեզ տարիներ հետո:

## Ինչ են սեռական գորտնուկները:

- Փոքրի աճող գոյացություններ են, որոնք կարող են տեղակայված լինել խմբերով կամ միայնակ: Որպես կանոն անցավ են, բայց կարող են առաջացնել քոր, ինչպես նաև արյունային արտադրություն:
- Կարող են հայտնաբերվել մարմնի ցանկացած հատվածում: Գոտկատեղից մինչև ծնկներ, կրծքավանդակին, մեջքին, բերանում:
- Անգամ եթե ունենք վիրուսը, սեռական գորտնուկները կարող են առաջանալ տևական ժամանակ հետո:
- Դուք կարող եք փոխանցել վիրուսը նույնիսկ այն ժամանակ երբ ակներև բացակայում են սեռական գորտնուկները:

